

Կրթության լոգիստիկայի վիճակագրական վերլուծությունը

Մարգարյան Հ. Գ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
hasmikgs@gmail.com

Ավետիսյան Հ. Հ.

Հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, Հայաստան)

Վճռորոշ բառեր՝ կրթության լոգիստիկ շղթա, փոխկապակցվածություն

Статистический анализ логистики образования

Саргсян А. Г., Аветисян Е. А.

Армянский государственный педагогический университет (Ереван, Армения)

hasmikgs@gmail.com

Резюме: Внедрение логистики как возможности для науки в области управления образованием может привести к развитию механизмов социально-экономического развития образования. Как мы предлагаем вести понятие «образовательная логистика», для которого предлагается следующее определение в качестве рабочего определения? Логистика образования-это область создания образовательных услуг, управления материальными, техническими и финансово-сервисными потоками, связанными с образованием, управления ими, их доставки потребителям, а также эффективного экономического планирования и контроля.

Ключевые слова: образовательная логистическая цепочка, взаимосвязанность

Statistical Analysis of Education Logistics

Sargsyan H. G., Avetisyan H. H.

ASPU (Yerevan, Armenia)

hasmikgs@gmail.com

Abstract: The introduction of logistics as an opportunity for science in the field of education management can lead to the development of mechanisms for the socio-economic development of education. How do we propose to introduce the concept of "educational logistics", for which the following definition is proposed as a working definition? Education logistics is the area of creating educational services, managing material, technical and financial-service flows related to education, managing them, delivering them to consumers, as well as effective economic planning and control.

Keywords: education logistics chain, reciprocity

2006-2018 թթ. ՀՀ հանրակրթական դպրոցներում աշակերտների, հիմնական և միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թիվը ունեցել է նվազման միտումներ (հավելված 1):

Այդուսակ 1-ում բերված տվյալներից երևում է, որ ՀՀ հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը տարեկան միջին հաշվով կրճատվել է 7333 մարդով կամ 1,73%-ով: Հիմնական կրթությամբ շրջանավարտների թիվը տարեկան միջին հաշվով կրճատվել է 1756 մարդով կամ 4,22%-ով, իսկ միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թիվը՝ 2838 մարդով կամ 11,99%-ով:

ՀՀ նախամասնագիտական (արհեստագործական) հաստատությունների ընդունվածների, ուսանողների և շրջանավարտների թիվը 2006-2018 թթ. ընդհանուր առմամբ ունեցել են աճի միտումներ (հավելված 2):

Հարկ է նշել, որ պայմանաված հանրակրթական դպրոցների 10-ամյա կրթությունումից 12 ամյա կրթական համակարգին անցնելով պայմանավորված՝ նախամասնագիտական հաստատություններ ընդունվածների թվի դինամիկան վերլուծվել է ըստ տարբեր ժամանակահատվածներով:

Այդուսակ 2-ում ներկայացված վերլուծության արդյունքներից երևում է, որ 2007-2010 թթ. հիմնական կրթությամբ ընդունվածների թիվը ունեցել է աճի միտում, իսկ հաջորդող տարիներին՝ կրճատման միտում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում միջնակարգ կրթությամբ ընդունվածների թիվն ունեցել է կրճատման միտում:

2007-2010 թթ. ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնական կրթությամբ շրջանավարտների թվի 6,0%-ով կրճատման հետ զուգահեռ

Աղյուսակ 1.

ՀՀ հանրակրթական դպրոցների աշակերտների և շրջանավարտների թվի դինամիկայի միջին ցուցանիշները 2006-2018 թթ.

Ցուցանիշներ	Միջին բացարձակ հավելանք, մարդ	Աճի միջին տեմպ, %	Հավելանքի միջին տեմպ, %
Աշակերտներ	-7334	98.27	-1.73
Հիմնական կրթությամբ շրջանավարտներ	-1756	95.78	-4.22
Միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ	-2838	88.01	-11.99

Աղյուսակ 2

ՀՀ նախամասնագիտական (արհեստագործական) հաստատությունների ընդունվածների, ուսանողների և շրջանավարտների դինամիկայի միջին ցուցանիշները 2006-2018 թթ.

Ցուցանիշներ	2007-2010 թթ	2006-2010 թթ	2010-2011 թթ	2012-2018 թթ	2006-2018 թթ
Հիմնական կրթությամբ ընդունվածներ	245 մարդ (14.4%)	-	-171 մարդ (-7.7%)	-26 մարդ (-1.1%)	-
Միջնակարգ կրթությամբ ընդունվածներ	-	-189 մարդ (-14.0%)	-604 մարդ (-66.4%)	-5 մարդ (-0.6%)	-
Ընդամենը ընդունվածներ	-	-	-	-	105 մարդ (4.8%)
Ուսանողներ	-	-	-	-	219 մարդ (4.2%)
Շրջանավարտներ	-	-	-	-	157 մարդ (23.4%)

Աղյուսակ 3

ՀՀ միջին մասնագիտական հաստատությունների ընդունվածների, ուսանողների և շրջանավարտների դինամիկայի միջին ցուցանիշները 2006-2018 թթ.

Ցուցանիշներ	2007-2010 թթ	2006-2010 թթ	2010-2011 թթ	2012-2018 թթ	2006-2018 թթ
Հիմնական կրթությամբ ընդունվածներ	738 մարդ (19,3%)	-	1982 մարդ (36,8%)	59 մարդ (0,91%)	-
Միջնակարգ կրթությամբ ընդունվածներ	-	-1277 մարդ (-13,8%)	-4186 մարդ (-66,7%)	-535 մարդ (-21,9%)	-
Ընդամենը ընդունվածներ	-	-	-	-	-320 մարդ (-3,4%)
Ուսանողներ	-	-	-	-	-635 մարդ (-2,3%)
Շրջանավարտներ	-	-	-	-	-195 մարդ (-2,7%)

նախամասնագիտական հաստատություններ հիմնական կրթությամբ ընդունվածների թիվն ավելացել է 14,4%-ով: 2010-2011թթ հանրակրթական դպրոցի հիմնական կրթությամբ շրջանավարտների թվի 9,3%-ով կրճատումը ընթացել է նախամասնագիտական հաստատություններ հիմնական կրթությամբ ընդունվածների 7,7%-ով կրճատմամբ: 2012-2018 թթ ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնական կրթությամբ շրջանավարտների թվի 3,3%-ով կրճատման արդյունքում նախամասնագիտական հաստատություններ հիմնական կրթությամբ ընդունվածների թիվը կրճատվել է 1,1%-ով:

2006-2010 թթ ՀՀ հանրակրթական դպրոցների միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թիվը կրճատվել է 4,7%-ով, որին զուգահեռ նախամասնագիտական հաստատություններ միջնակարգ կրթությամբ ընդունվածների թիվը կրճատվել է 14,0%-ով: Հանրապետությունում

2011 թ միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ չի եղել, սակայն նախամասնագիտական հաստատություններ ընդունվել են 306 մարդ: 2012-2018 թթ. ՀՀ հանրակրթական հաստատությունների միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թիվը միջին հաշվով կրճատվել է 19,7%-ով, որին զուգահեռ նախամասնագիտական հաստատություններ միջնակարգ կրթությամբ ընդունվածների թիվը կրճատվել է 0,6%:

2006-2018 թթ. ՀՀ նախամասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը միջին հաշվով ավելացել է 4,8%-ով, ուսանողների թիվը՝ 4,2%-ով, իսկ շրջանավարտների թիվը՝ 23,0%-ով:

2006-2018 թթ. ՀՀ միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների, ուսանողների և շրջանավարտների թիվը ունեցել է կրճատման միտում (հավելված 3):

2006-2018 թթ. ՀՀ միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը միջին հաշվով տարեկան կրճատվել է 320 մարդով կամ 3,4%-ով, ուսանողների թիվը՝ 635 մարդով կամ 2,3%-ով, իսկ շրջանավարտների թիվը՝ 195 մարդով կամ 2,7%-ով:

2007 թ. սկսած ՀՀ միջին մասնագիտական հաստատություններում ընդունելություն կատարվեց նաև հիմնական կրթության բազայի հիման վրա: 2007-2010 թթ. ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնական կրթությամբ շրջանավարտների թիվը կրճատվել է 6,0%-ով, իսկ միջին մասնագիտական հաստատություններ հիմնական կրթությամբ ընդունվածների թիվն ավելացել է 19,7%-ով: 2010-2011 թթ. հանրակրթական դպրոցի հիմնական կրթությամբ շրջանավարտների թվի 9,3%-ով կրճատմանը զուգահեռ միջին մասնագիտական հաստատություններ հիմնական կրթությամբ ընդունվածների թիվը ավելացել է 36,6%-ով: 2012-2018 թթ. ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնական կրթությամբ շրջանավարտների թվի 3,3%-ով կրճատմանը զուգահեռ միջին մասնագիտական հաստատություններ հիմնական կրթությամբ ընդունվածների թիվը ավելացել է 0,9 %-ով:

2006-2010 թթ. ՀՀ հանրակրթական դպրոցների միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թիվը կրճատվել է 4,7%-ով, որին զուգահեռ

միջին մասնագիտական հաստատություններ միջնակարգ կրթությամբ ընդունվածների թիվը կրճատվել է 13,8%-ով: Հանրապետությունում 2011 թ. միջնակարգ կրթությամբ շրջանավարտներ չի եղել, սակայն միջին մասնագիտական հաստատություններ ընդունվել են 9462 մարդ: 2012-2018 թթ. ՀՀ հանրակրթական հաստատությունների միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թիվը միջին հաշվով կրճատվել է 19,7%-ով, որին զուգահեռ միջին մասնագիտական հաստատություններ միջնակարգ կրթությամբ ընդունվածների թիվը կրճատվել է 21,9%:

2006-2018 թթ. ՀՀ նախամասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը միջին հաշվով ավելացել է 4,8%-ով, ուսանողների թիվը՝ 4,2%-ով, իսկ շրջանավարտների թիվը՝ 23,0%-ով:

2006-2018 թթ. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում առաջին աստիճանի համակարգում ընդունվածների և ուսանողների թիվը ունեցել է նվազման, իսկ շրջանավարտների թիվը՝ աճի միտում (հավելված 4):

Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2006-2010 թթ. ընդունվողների թիվը տարեկան միջին հաշվով ավելացել է 219 մարդով կամ 0,85%-ով: 2006-2010 թթ. ՀՀ հանրակրթական դպրոցների միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թվի տարեկան 4,73%-ով կրճատման հետ զուգահեռ ԲՈՒՀ-եր

Աղյուսակ 4

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձրագույն կրթության առաջին աստիճանի համակարգում ընդունվածների, ուսանողների և շրջանավարտների դինամիկայի միջին ցուցանիշները 2006-2018 թթ.

Ցուցանիշներ	2006-2010 թթ	2012-2018 թթ	2006-2018 թթ
Ընդունվողներ	219 մարդ (0,85%)	-1972 մարդ (-12,6%)	-1338 մարդ (-7,9%)
Ուսանողներ	-	-	-3017 մարդ (-3,4%)
Շրջանավարտներ	-	-	2 մարդ (0,01%)

Աղյուսակ 5

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի համակարգում ընդունվածների, ուսանողների և շրջանավարտների դինամիկայի միջին ցուցանիշները 2006-2018 թթ.

Ցուցանիշներ	Միջին բացարձակ հավելյալ, մարդ	Աճի միջին տեմպ, %	Հավելյալի միջին տեմպ, %
Ընդունվողներ	289	108,1	8,1
Սովորողներ	559	108,4	8,4
Շրջանավարտներ	319	110,5	10,5

Աղյուսակ 6

ՀՀ հետբուհական կրթության հիմնական ցուցանիշների դինամիկայի միջին ցուցանիշները 2006-2018 թթ.

Ցուցանիշներ	Միջին բացարձակ հավելյալ, մարդ	Աճի միջին տեմպ, %	Հավելյալի միջին տեմպ, %
Ասպիրանտուրա			
Ընդունվողներ	-16	95,2	-4,8
Ասպիրանտներ	-44	96,5	-3,5
Ավարտածներ	-13	96,3	-3,7
Ատենախոսությունը պաշտպանածներ	-5	96,5	-3,5

	<i>Դոկտորանտուրա</i>		
Ընդունվողներ	-1	97,4	-2,6
Սովորողներ	-2	94,5	-5,5
Ավարտածներ	1	102,7	2,7
Ատենախոսությունը պաշտպանածներ	-1	-	-

ընդունվողների թիվը տարեկան ավելացել է 0,8%-ով: 2011թ. ՀՀ հանրակրթական դպրոցներում շրջանավարտ չի եղել, սակայն ԲՈՒՀ-եր ընդունվել են 7584 մարդ (նախորդ տարիների շրջանավարտներ), որը 2010թ.-ի համեմատությամբ 71,3%-ով քիչ է եղել, իսկ արդեն 2012թ. ընդունվածների թիվը կազմել է 21342 մարդ: 2012-2018թթ. ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնական կրթությամբ շրջանավարտների թվի 3,3%-ով կրճատմանը զուգահեռ ընդունվածների թիվը միջին հաշվով տարեկան նվազել է 12,6%-ով:

2006-2018թթ. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում երկրորդ աստիճանի համակարգում ընդունվածների, ուսանողների և շրջանավարտների թիվը ունեցել է աճի միտում (հավելված 4):

Վերլուծությունները ցույց են տվել, որ 2006-2018թթ. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում առաջին աստիճանի համակարգում շրջանավարտների տարեկան 0,01%-ով աճին զուգահեռ երկրորդ աստիճանի համակարգում ընդունվածների թիվը ավելացել է 8,1%-ով (բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի համակարգում ընդունվածների կազմում ներառվում են նաև նախորդ տարիների առաջին աստիճանի համակարգի շրջանավարտների մի մասը): ՀՀ բարձրագույն

ուսումնական հաստատություններում երկրորդ աստիճանի համակարգում ընդունվածների թվի տարեկան հավելանք նպաստել է սովորողների տարեկան 8,4 % աճին, արդյունքում էլ՝ շրջանավարտների թիվը տարեկան ավելացել է 10,5%-ով:

2006-2018թթ. ՀՀ-ում հետբուհական կրթության հիմնական ցուցանիշները ունեցել են նվազման միտումներ (հավելված 5):

Այդուսակ 6-ում ներկայացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2006-2018թթ. ասպիրանտուրա ընդունվածների թվի տարեկան միջին հաշվով 4,8%-ով կրճատումը ասպիրանտների թիվը միջին հաշվով կրճատել է 3,5%-ով, ավարտողների թիվը՝ 3,7%-ով: Այս ցուցանիշների փոխկապակցված կրճատման միտումները հանգեցրել են ատենախոսությունը պաշտպանածների թվի 3,7% կրճատմանը:

2006-2010թթ. ՀՀ-ում դոկտորանտուրա ընդունվածների թիվը տարեկան կրճատվել է 2,6%-ով, դոկտորանտուրա սովորողների թիվը՝ 5,5%-ով: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում դոկտորանտուրա ավարտածների թիվը տարեկան ավելացել է 2,7%-ով, իսկ ատենախոսությունը պաշտպանածների թիվը բնութագրվել է բացասական միտումներով:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին և դինամիկայի շարքեր (2014-2018)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ Երևան 2019, 695 էջ, էջ. 78-79, 84, 98-100,
2. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2013 թվականին և դինամիկայի շարքեր (2008-2013)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2014, 553էջ, էջ. 69-70, 74-75, 84-88,
3. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թվականին և դինամիկայի շարքեր (2007-2012)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2013, 517էջ, էջ. 67-68,
4. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2011 թվականին և դինամիկայի շարքեր (2006-2011)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2012, 450էջ, էջ. 57-58,61,
5. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2009 թվականին և դինամիկայի շարքեր (2004-2009)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2014, 553էջ, էջ. 53, 55,

6. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին և դինամիկայի շարքեր (2014-2018)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ Երևան 2019, 695 էջ, էջ. 153-154, 158-159,
7. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2013 թվականին և դինամիկայի շարքեր (2008-2013)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2014, 553էջ, էջ. 133-135,139,
8. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թվականին և դինամիկայի շարքեր (2007-2012)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2013, 517էջ, էջ. 114-116, 120,
9. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2011 թվականին և դինամիկայի շարքեր (2006-2011)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2012, 450էջ, էջ. 100, 102-103
10. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին և դինամիկայի շարքեր (2014-2018)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ Երևան 2019, 695 էջ, էջ. 191-193, 194-195, 198-199, 209-210, 212,
11. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2013 թվականին և դինամիկայի շարքեր

- (2008-2013)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2014, 553էջ, էջ. 167-169, 170-171,175-176, 184-185, 188,
12. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թվականին և դինամիկայի շարքեր (2007-2012)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2013, 517էջ, էջ. 151-153, 154, 159,169-170, 173,
13. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2011 թվականին և դինամիկայի շարքեր (2006-2011)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2012, 450էջ, էջ. 134, 136, 138, 146-148
14. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին և դինամիկայի շարքեր (2014-2018)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ Երևան 2019, 695 էջ, էջ. 270-273, 276-277,285-289, 297-298,
15. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2013 թվականին և դինամիկայի շարքեր (2008-2013)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2014, 553էջ, էջ. 237-241, 245-246, 253-257, 261-262,
16. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2011 թվականին և դինամիկայի շարքեր

- (2006-2011)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2012, 450էջ, էջ. 183,188, 193-194, 200-201,
17. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին և դինամիկայի շարքեր (2005-2010)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2011, 391էջ, էջ. 183,188, 159
18. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին և դինամիկայի շարքեր (2014-2018)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ Երևան 2019, 695 էջ, էջ. 317-323, 326-330,
19. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2013 թվականին և դինամիկայի շարքեր (2008-2013)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2014, 553էջ, էջ. 278-284, 284-289,
20. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2011 թվականին և դինամիկայի շարքեր (2006-2011)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Երևան 2012, 450էջ, էջ. 215-216, 218, 220, 223-226.

Տժնային/Հանձնվել է՝ 12.09.2020

Рецензирована/Գրախոսվել է՝ 15.09.2020

Принята/Ընդունվել է՝ 16.09.2020

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնական ցուցանիշները 2006-2018թթ. , մարդ [1-5]

Տարիներ	Պետական հաստատություններ			Ոչ պետական հաստատություններ			Ընդամենը		
	Աշակերտների թիվը	Շրջանավարտների թիվը		Աշակերտների թիվը	Շրջանավարտների թիվը		Աշակերտների թիվը	Շրջանավարտների թիվը	
		մյուսվարձի հրահանգով	մյուսվարձի կանոնադրված		մյուսվարձի հրահանգով	մյուսվարձի կանոնադրված		մյուսվարձի հրահանգով	մյուսվարձի կանոնադրված
2006թ.	458561	51630	42914	6842	500	524	465403	52130	43438
2007թ.	425891	49620	46962	5389	506	586	431280	50126	47548
2008թ.	408936	46201	45068	5845	437	667	414781	46638	45735
2009թ.	386954	48565	40108	5992	576	736	392946	49141	40844
2010թ.	365486	41147	35280	5406	467	507	370892	41614	35787
2011թ.	380696	37362	0	5743	394	0	386439	37756	0
2012թ.	361228	37376	34016	7480	558	930	368708	37934	34946
2013թ.	353580	35400	26745	6866	516	674	360446	35916	27419
2014թ.	352029	29639	23091	3420	391	609	355449	30030	23700
2015թ.	356717	14040	23087	3445	214	639	360162	14254	23726
2016թ.	357052	28823	22069	3557	481	586	360609	29304	22655
2017թ.	360321	28874	18232	3828	488	517	364149	29362	18749
2018թ.	373064	30480	9177	4330	584	204	377394	31064	9381

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ նախամասնագիտական (արհեստագործական) հաստատությունների հիմնական ցուցանիշները 2006-2018 թթ., մարդ [6-9]

Տարիներ	Ընդունվողների թիվը, ընդամենը	Այդ թվում՝		Ուսանողների թիվը	Շրջանավարտների թիվը
		հիմնական կրթությամբ	միջնակարգ կրթությամբ		
2006թ.	1664		1664	4095	164
2007թ.	1819	1475	344	4244	709
2008թ.	2106	1388	718	4581	1103
2009թ.	2701	2055	646	5618	1848
2010թ.	3119	2209	910	6393	1940
2011թ.	2344	2038	306	5614	1604
2012թ.	3111	2374	737	6853	1809
2013թ.	3391	2440	951	7448	2196
2014թ.	3267	2378	889	7295	2244
2015թ.	2883	1816	1067	6874	2867
2016թ.	3161	2078	1083	6251	2359
2017թ.	3298	2172	1126	6500	2671
2018թ.	2926	2217	709	6723	2045

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀՀ միջին մասնագիտական հաստատությունների հիմնական ցուցանիշները 2006-2018 թթ., մարդ [10-13]

Տարիներ	Պետական					Ոչ պետական					Ընդամենը				
	Ընդունվողների ընդամենը	Այդ թվում՝		Ուսանողներ	Շրջանավարտներ	Ընդունվողների ընդամենը	Այդ թվում՝		Ուսանողներ	Շրջանավարտներ	Ընդունվողների ընդամենը	Այդ թվում՝		Ուսանողներ	Շրջանավարտներ
		Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ				Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ				Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ		
2006թ.	10632		10632	28305	8091	1072	321	751	2546	323	11704	321	11383	30851	8414
2007թ.	11263	2927	8336	28989	7846	847	251	596	2251	333	12110	3178	8932	31240	8179
2008թ.	11067	2922	8145	29632	8147	881	289	592	2171	468	11948	3211	8737	31803	8615
2009թ.	10286	3570	6716	28368	8394	644	325	319	1618	233	10930	3895	7035	29986	8627
2010թ.	10906	5036	5870	27922	8081	760	356	404	1653	301	11666	5392	6274	29575	8382
2011թ.	8796	6883	1913	27381	7371	666	491	175	1826	365	9462	7374	2088	29207	7736
2012թ.	9664	5832	3832	27452	7308	735	418	317	1855	625	10399	6250	4149	29307	7933
2013թ.	9166	6066	3100	28333	6390	619	347	272	1792	639	9785	6413	3372	30125	7029
2014թ.	7986	5383	2603	26846	6883	484	304	180	1637	695	8470	5687	2783	28483	7578
2015թ.	5849	3367	2482	22737	7484	466	231	235	1563	603	6315	3598	2717	24300	8087
2016թ.	7850	5551	2299	21788	7056	479	337	142	1405	621	8329	5888	2441	23193	7677
2017թ.	7919	5961	1958	21525	6717	635	489	146	1538	447	8554	6450	2104	23063	7164
2018թ.	6955	6107	848	21719	5566	586	496	90	1509	500	7541	6603	938	23228	6066

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները 2006-2018 թթ. [14-17]

Տարիներ	Բարձրագույն կրթության առաջին աստիճան									Բարձրագույն կրթության երկրորդ աստիճան		
	Պետական			Ոչ պետական			Ընդամենը			Ընդունվողներ	Սովորողներ	Շրջանավարտներ
	Ընդունվողներ	Ուսանողներ	Շրջանավարտներ	Ընդունվողներ	Ուսանողներ	Շրջանավարտներ	Ընդունվողներ	Ուսանողներ	Շրջանավարտներ			
2006թ.	19491	81383	11136	6076	24447	4380	25567	105830	15516	2256	4146	1654
2007թ.	20122	86693	12910	6035	25551	4953	26157	112244	17863	2392	4344	1743
2008թ.	22224	89573	20196	5103	24826	5911	27327	114399	26107	4776	7045	2148
2009թ.	22027	91890	17991	4464	22739	5361	26491	114629	23352	4998	9081	2409
2010թ.	22459	91404	18314	3984	19599	5621	26443	111003	23935	6020	10344	4696
2011թ.	6609	80400	20550	975	14908	4380	7584	95308	24930	6889	11547	4709
2012թ.	19458	76730	20031	1884	13415	4566	21342	90145	24597	7125	12105	5175
2013թ.	17249	73576	18114	1785	12346	3830	19034	85922	21944	7541	14932	7125
2014թ.	16032	69538	15536	1441	10085	4166	17473	79623	19702	7373	14476	7522
2015թ.	16850	75393	10319	1211	9198	2347	18061	84591	12666	5807	11911	6484
2016թ.	16172	72517	16351	1477	9131	2685	17649	81648	19036	6401	10910	6507
2017թ.	13980	69376	15455	1558	9371	2332	15538	78747	17787	6192	11793	4613
2018թ.	8200	61495	13714	1312	8127	1826	9512	69622	15540	5732	10855	5483

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՀՀ-ում հետբուհական կրթության հիմնական ցուցանիշները 2006-2018 թթ. [18-20]

Տարիներ	Ասպիրանտուրա					Դոկտորանտուրա			
	Ընդունվողներ	Սովորողներ	Ավարտածներ	Ատենախոսություններ պաշտպանածներ	Ատենախոսություններ կայացրածներ	Ընդունվողներ	Սովորողներ	Ավարտածներ	Ատենախոսություններ պաշտպանածներ
2006թ.	445	1509	431	164	-	15	59	8	2
2007թ.	371	1414	343	236	-	16	60	7	2
2008թ.	382	1320	425	149	28	18	72	17	13
2009թ.	273	1393	597	190	28	13	56	17	6
2010թ.	275	1232	440	167	40	14	57	13	8
2011թ.	368	1054	370	144	15	12	45	10	5
2012թ.	373	1104	368	203	34	11	51	9	3
2013թ.	395	1241	239	139	34	12	36	8	2
2014թ.	321	1223	314	138	47	20	46	12	3
2015թ.	353	1178	324	128	41	13	39	13	2
2016թ.	396	1202	334	137	39	13	53	14	1
2017թ.	265	1085	348	136	34	15	45	16	1
2018թ.	248	985	273	107	40	11	30	11	0